

# Մշակութային

## «ՅՈՒՇԱՐՉԱՆ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ» ԵՐԵՒԱՆ, 2010 ԿԱԶՄՈՂ ԵՒ ԽՄԲԱԳՐՈՂ ԴՊԿՏ. ԱՐԻ ԹՓՓՈՒԶԱՎՆԵԱՆ

580 էջեր բաղկացած հատորը իր մեջ կը բովանդակե ուսուցչապետին յուշերը, պատմական, կրօնական, ազգասիրական, լեզուաբանական և հայրենասիրական յօդուածները նշոյշներ եւ վկայութիւններ հարազատներէ, աշակերտներէ, պաշտօնակիցներէ եւ ծանօթներէ: Հայրենի կառավարութեան կողմէ պարգեւատրուելուն հետ, յետ մահու գնահատումներն ու արժեւորումները ծննդեան 100-ամեակի տօնակատարութիւններով եւ վաստակը գնահատող գրութիւններով:

Կազմող-խմբագրողին միտումն եղած է, որ հատորը ըլլայ իսկական յուշարձան մը մեծ դաստիարակին կեանքն ու գործը յաւերժացնող: Մերունդներուն վկայող:

Հատորին յօդուածներէն նմոյշները պարզապէս գաղափար մը կու տան յօդուածագիր Բենիամին ժամկոչեանի մասին: Իր մտաւոր ճիգին արգասիքն ու զինք տազնապետացած հարցերու մասին անդրադարձները քակի մը հատոր կը լեցնեն: Վկայութիւններու եւ տպաւորութիւններու նուիրուած էջերը կը բնութագրեն ամբողջ կեանք մը սերունդներու դաստիարակութեան նուիրուած տնօրէնի ինքնուրոյն տիպարը, դաստիարակի նուիրումը եւ մանկավարժի արժեքը: Հոգիներու մէջ հետք ձգած հոգեկան, մտաւոր եւ բարոյական արժեքներու սերմնացանը, որ իրագործած է մարդակերտի եւ հայակերտի առաքելութիւնը: «Մէկ հայ ապրեցնելն ու դաստիարակելը՝ հազար թուրք սպանելէն աղէկ է» փրոֆ. Յովհաննէս Դուհիգանեանի նշանաբանին հետեւողութեամբ:

«Յուշարձան»ին հիմնական մասը յուշերն են, - շուրջ 386 էջ-ողոնք կը պատմեն ու կը նկարագրեն Որբութեան, Որբանոցի, Յեղափոխական Չինուորի եւ Ուսուցիչի կեանքը իր յարակից բոլոր մանրամասնութիւններով, դրուագներով, պատահարներով, ճակատագրական դէպքերով՝ Ատանայի աղետին եւ Մեծ Եղեռնի խորապատկերին վրայ: Թէեւ Բենիամին ժամկոչեան տեղ մը կ'ափսոսայ որ «աւարդ, միշտ մնացի գրականութիւն փորձելու անընդունակ», բայց իր յուշերը առանց գեղարուեստական տարագի ու կառոյցի որբութիւնը եւ որբանոցային կեանքը, իր ամբողջ դաժանութեամբ եւ տաժանութեամբ ապրածի վկայութիւններով իր նպաստը կը բերէ որբերու յատուկ գրականութեան:

Ուսուցչապետը որբանոցի եւ որբանոցային կեանքի նկարագրութիւններով եւ մանրամասնութեամբ շատ բան փրկած է գրկանքի եւ արհաւիրքի առօրէյակին հետ այդ օրերու բարքերէն, խաղերէն, տօնախմբութիւններէն, հայրիկներու եւ մայրիկներու

հոգածութենէ: Պատկերացուցէ 1895-ին, առաջին կոտորածի տարին ծնած մատուկ մը, որ իր ծնունդէն 40 օրեր ետք կը կորսնցնէ իր հայրը եւ կը բաժնուի մօրմէն, - անոր վերամուսնութեան պատճառով, - եւ մեծ մօր ինամքէն ետք երեք տարեկանին կը յանձնուի գերմանական որբանոց, ուր նախակրթութիւն եւ միջնակարգ ուսում ստանալով կ'աւարտէ ուսուցչանոցը դառնալու համար իր կոչումին ծառայող ուսուցիչ-դաստիարակը: Որբանոցի մէջ կոփուած, կարծրացած եւ հաստատակամ նկարագիր կազմած Մարոն ու Հայրը, որ Բենիամին ժամկոչեանն է:

«Յեղափոխական Չինուորը» բաժնի յուշերը Բենիամին ժամկոչեանի տարբեր եւ անծանօթ մնացած երեսը կը պարզեն: Օսմանեան բռնատիրութեան դէմ պայքարելու ոգին կը կազմուի իր մէջ հնչակեան յեղափոխական գործիչներու շունչով եւ ներշնչումով: Անծանօթ տեսած է «Յեղափոխական այդ սուլակն»՝ Փարամազը եւ լսած գայլն իր հմայքին ազդեցութեան ներգործութեամբ: Ծանչցած է Անդրանիկը եւ կամաւորագրուած անոր բանակին: Հանդիպած է յեղափոխական ծրագիրներու մասին խօսած է Լազոյին (քրտերէն այբուբենի հեղինակ) եւ առաջին յեղափոխական կուսակցութեան հիմնադիրներէն՝ Մարոյին հետ: Յեղափոխական շարժումին մասնակցութեամբ «ստացած կրակէ մկրտութիւնը»: «Գիշերը տնակի մը մէջ կրակ վառելով, ու կրակի շուրջը՝ փորձելուս տակ մէջ-մէկ փայտ դնելով, փոճեցիք քնանալ: Առտուն շարունակեցիք թնկասութիւն գետեղումը, երբ քիւրտերուն կողմէ յարձակումի ենթարկուեցանք: Երբ առաջին գնդակը անցաւ գլխուս վրայէն, ըսի. «Կրակէ մկրտութիւնը ստացայ» եւ որոշեցի ժիրայր կոչուիլ, քանի որ երբօրս կ'եղծանունը Հրայր էր»:

Յեղափոխականի կողքին իր յուշերու ընդմէջէն ի յայտ եկած է նաեւ քաղաքական միտքի վերլուծական կարողութիւնը, յատկապէս ինչ կը վերաբերի Կիլիկիոյ մէջ ֆրանսական դիւանագիտութեան խարդախ ու խաբէբայ նկարագրին: Ընդհանրացումով մը կը բնութագրէ քաղաքականութեան եութիւնը. «Ըսւած է թէ քաղաքականութիւնը պոռնկութիւն է: Իմ կարծիքովս, պոռնկութեան առջէն քաղաքականութիւնը կրնայ կարմրիլ»: Կէս ընդհանրացումը կը մեկնի պատմական այն իրողութենէն, որ ֆրանսացիները կիլիկեան հայութեան համար յայտարարել է տը «Կիլիկեան ձերն է» շատ չանցած Անգարայի հետ դաւադիր բանակցութեամբ Կիլիկեան կը յանձնեն Թուրքիոյ, պարպետով գայն ֆրանսական բանակներէն...: Սուրիոյ Հօ Գոմիսէր

Չօրավար Կուրոյի դերակատարութեամբ: Յամենայնդեպս, սպանդէն ետք Կիլիկիոյ մէջ հայկական գործունեութեան մասին Բենիամին ժամկոչեանի յուշերը պատմական կարեւոր նիւթեր կը պարունակեն:

«Ուսուցիչը» Դ. մասի յուշագրական էջերը որքան ալ իր ուսուցչական ասպարեզին եւ ծառայութիւններուն կը վերաբերին, սակայն, Բենիամին ժամկոչեանի կեանքէն եւ հասարակական մտածողութենէն հեռու չեն պահուած ազգային կեանքի ցաւոտ երեսները, եպրեղի արարքները, անհամաձայնութեան սերմերը ցանող շրջանակներու կուսակցամուլական անհանդուրժողութիւնները: Կուսակցական շահը ամեն բանէ վեր դասելու մութեան կիրքը:

Այս անկիւնէ դիտուած վաւերագրական Է լիբանանահայ գաղութի պատմութեան համար գաղութի կազմաւորման շրջանին չարայուշօրէն զուգահեռող իշխանատնայնութեան պայքարներու պատմումը՝ մինչէ տղայրասպանութեան հասնող, ականատեսի վկայութեամբ...: Թուրքին դէմ ազատագրական պայքարի համար հիմնուած յեղափոխական կուսակցութիւնները իրարու դէմ արիւնտու կռիւներ մղելու դատապարտելի եւ ծայրայեղ ընթացքի մէջ կը գտնուին...: Բենիամին ժամկոչեան իր յուշերով ականատեսի վկան է այդ տխուր իրադարձութիւններուն հայրավայել կեցուածքով...:

Մինչէ Սահակեանի տնօրէնութիւնը՝ Ատանայի Հայ Ազգային Վարժարանը եւ ՄԴԳԿ-ի Կեդրոնական վարժարանը. Պէյրութի Մերձաւոր Արեւելքի որբանոցը, ՀԲԸՄ-ի ԶԷԼԿեան որբանոցը, Հայ Ազգային Ս. Նշան վարժարանը եւ դանիական «Թռչնոց Բոյն» որբանոցը ուսուցչական ծառայութիւններուն կապուած յուշերը, եթէ մէկ կողմէ անձնական կեանքին հետ կապուած դառն փորձառութիւններու եւ ապրումներու իրապատումն են, միւս կողմէ մեր կրթական կեանքի որոշ երեսներուն եւ կառոյցներուն պատկերը կու տան: Անոց լաւագոյն նմոյշներն են Ատանայի Ազգարեանն ու Կեդրոնականը: Մասնաւոր վերջինին տուած բարբեր հունձըը:

Մինչէ Սահակեանի տնօրէնի պաշտօնին կոչուիլը, ինքզինք կատարելագործած տիպար ուսուցիչն էր Բենիամին ժամկոչեան: Աւելի քան քառասուն տարիներ Սահակեանի տնօրէնութիւնը վարելու կազմակերպչական, վարչագիտական, մանկավարժական եւ մտաւորական բազմակողմանի կարողութիւնները զինք բարձրացուցին ուսուցչապետի պատուանդանին:

ՊԵՏՍՈՒՆԱՆ

### ԷՋԵՐ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԸ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՓԱՐԱՄԱԶԻ ՀԵՏ

Եկա Փարամազը: Ինչ ալ ըսեն կամ գրեն, գիւղ ու քաղաք հնայեց: Համեստ պանդուկի մը խեղճուկ մէկ սենեակը կ'ապրէր: Կլցնեցիք: Յեղափոխական այդ սուլակն, համեստ հօրերօք մը նման, ցածուկ մահճակալին վրայ նստած կը խօսէր: Յատկապէս Հնչակեան շարքերը հմայեց: Խորունկ ծանօթութիւն ուներ ընկերային, փիլիսոփայական, գիտական հարցերու շուրջ:

Չատիկ Մեռելոցին, Մեգիրիի գերեզմանատան մէջ, Յարթ-Յակոբի շիրմին վրայէն խօսեցաւ ծովածաւալ բազմութեան մը: Ելեկտրականացուց՝ երբ ըսաւ. «Հոն՝ ուր կախաղաններ են ծօծում, ազատութիւնն է ման գայիս, հոն՝ ուր մեռելներ են ննջում, յարութիւնն է մօտալուս: Կարելի չէր բանախօսութիւնը միտք պահել: Ո՛հ, եթէ այսօրուան ձայնագրող մեքենաները գոյութիւն ունեային...»:

Ժամանակ մը հարբերող մնաց, պպա սեքաստացի ընկեր Վահագնին հետ անցաւ Տիգրանակերտ, Լըճէ, Նոյսպէս Հայնի՝ իմ գիւղս: Մեծ մամիկս կ'ըսէր. «Շրջիկը եկաւ, շրջիկը գնաց»: Ամառը՝ երբ գիւղ գացի, զարմացումով տեսայ երիտասարդներու գաղափարական հետաքրքրութիւնը: Չուկիակներ կը վիճէին «Ժամանակակառուութիւնն թէ միջավայր», եւ նման լուրջ հարցերու մասին: Փարամազ՝ ո՛ր որ գնաց, հետը լոյս, ջերմութիւն, զարգացում տարաւ: Ըրճէի մէջ ա՛յնքան գրաւեց ժողովուրդը, որ քիւրտերն անգամ իրենց միջեւ գոյութիւն ունեցող դատերուն համար իրեն դիմել սկսաւ՝ իր եւ ընկեր Վահագնի ունեցող դատերուն խնդրելով («միջնորդ» բառով պատմութեանը չափաւորել կ'ուզէին. այլապէս ըրածները միջնորդութենէ շատ անելի էին): Իր վախճանը հանրածանօթ է:

Ս. Վահագն, համեստ հնչակեան գիտուոր-գործիչ մը, միշտ յեղափոխական էր: Աւելի շիտակը, ընկերվարական շունչով լեցուն՝ ընկերացած էր Փարամազի:

### ԲԱԲԵՆՈՆԸ ԿԱՍ ԱՆԻՇԱՆԱՆՈՒԹԻՒՆ

Կատարեալ բաբելոնական խառնակութիւն մը կը տիրէր Կարնոյ մէջ: Զատնէ անելի առանձին խումբեր կային: Ահա՛ յիշողութեանս մէջ մնացած քանի մը անուններ. - Մուրատսի, Երզնկեանսի (թերեւս երկուքը Նոյնն էին), Սեպուհսի, Պայպուրթսի (ասոնք ալ թերեւս Նոյն խումբն էին), Երզրուսի: Իրարեւելի խումբ իր յարմար նկատած թաղին մէջ տուն մը գորանոցի վերածած կը կենար: Մեր խումբը Սանաարեան վարժարանին եւ ամերիկեան հաստատութիւններուն միջեւ գտնուած տուն մը գրաւած էր: Տունը՝ ծիւղերուց եւ փոխան՝ միայն ձիերու գորանոցն էր. իսկ ծիւղերներէն անոնք որ ազգական, բարեկամ կամ ծանօթ մը ունէին, գիշերը անոնք թող կ'անցնէին ու կերակուրը անոնք հետ կ'ուտէին:

Նախապէս յիշած եմ թէ գրուածներէն մեծ մասին ականատես եղած եմ, եւ մաս մըն ալ՝ ականաչալուր: Հոս ըսուեցաւ թէ Պ. Մուրատ բռնած է գաղտնի հեռաձայնային հաղորդակցութիւն մը թրքական բանակին եւ քաղաքապետ Աղամայեանի միջեւ, եւ խօսուեցաւ ծախսուած մեծաքանակ ալիւրի եւ շաքարի մասին: Սակայն Պ. Մուրատ, թէեւ պարտուած, ինքզինք ըստ իր սովորութեան տուած էր Անկախութեան կեանքի մը, որով այդօրինակ հարցեր միմիայն լսեց եւ ո՛չ մէկ քայլ առաւ: Գուցէ կուսակցական կարգապահութիւնն ալ իր դերը ունեցաւ:

Արդէն գոյութիւն ունեցող քսանէ անելի խումբերէն ոչ մին միւսին ենթակայ էր:

Բաբելոնական խառնակութիւնը հիանալիօրէն նկարագրուած էր ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՐՔԻՆԻ մէջ, որուն խմբագիրներէն էին

Լեւոն Լիւլճեան, Վահան Թոթովեց, որքան կը յիշէմ:

Մինչ մեր ներքինը այսքան անկարգ եւ անզուխ թոն ու բոնի մտտերած էր, թրքական բանակը կը յառաջանար եւ ներսէն՝ Կարնոյ անկումին Կարնոյ մէջ լուծուած Չորրորդ բանակը դաւազիրի գործունեութեան լծուած էր: Մթնոլորտը արդէն անշնչելի դարձած էր: Սարսափը Դամկլեան սուրի մը պէս կախած էր մեր գլխուն վրէնէ եւ փոթորիկը ապահովաբար պայթելու վրայ էր: Այս դառն իրականութիւնը մեր երեսին դաչելու աստիճան թանձրացած էր, բայց մենք ներքնապէս մատնուած էինք կատարել սահիշխանութեան: «Սքանչելի» Մուրատը, «ողբացեալ» Աղմայեան (այս ցակերտուած բառերը դաշնակցական պատմաբան Պ. Վարանդեանի գրքին մէջ գործածուած են), իր յուշերով հրապարակը ողորդող Սեպուհը լուռ էին, սահմուկած:

Ահաբեկ վիճակի մէջ էր հայութիւնը, որ բուռ մը յարդի պէս պիտի ոչնչանար, եթէ փրկութեան արեւը պայծառօրէն չճագեր յանկարծ:

«Անդրանիկը կու գայ...»: Մեզի՛ ճակատէն եկողներու համար արիւկա կ'արժէր ամեն բան: Անդրանիկը հերոսական ճիգերու մարմնացումն էր, եւ գիտուորը, հերոսական գործով մը կը գրաւուի, կ'ոգտուորի, հերոս կը դառնար: Զաջութիւնն ալ տարափոխիկ է:

Անդրանիկի գրեթէ հետիոտն մտաւ Կարին, ո՛չ թէ «արտակարգ շուրջով ու հանդիսութեամբ» (այսպէս գրած էր Վարանդեան), որուն արժանի էր: Յաջորդ օրը Պ. Մուրատ հրամայեց մեր յիսնեակին, որպէսզի երթանք Անդրանիկին ծիւղերու մէջ մնացած ինքնաշարժ բերեց: Ասիկա մեծ պատիւ մըն էր մեր յիսնեակին. բայց այս պատիւին արժանի ըլլալուս համար չէր որ մեզի հրամայուեցաւ, այլ ուրիշ որեւէ խումբ չկար՝ իր հրամանին ենթակայ:

Գացինք, եւ ո՛վ ապշուութիւն, ծիւղերուն մէջ գտանք բռնատար («բամբուս») մը: Ատկը հետեցնելով գրեցին. «Գրեթէ հետիոտն մտաւ Կարին»: Անդրանիկ, տեսնելով թէ ինքնաշարժ ծիւղերուն մէջէն պիտի չկարենայ յառաջանալ, հոն կը ձգէ, եւ ինք՝ իր մէկ-երկու ընկերակիցներով քաղաք կը մտնէ քայլով: Ուրիշ միջոց կար՝: Իր գալուստը ա՛յնքան հրճուեցաւ առթած էր, որ գինք տեսնելու փափաքէն գատ ո՛չ մէկ բան ունեցայ. որով ճիշդ չեմ գիտեր ինչպէ՛ս մտնելը:

Տարիներով երագած էինք Անդրանիկը, եւ ո՛վ կրնար կապուել Կարնոյ հայութիւնը, որ չկազեր փողոց, չբարձրակար տակնիք, չէլլեր պատշգամբ՝ տեսնելու համար իր Հերոսը, որուն մը ընչնիւնէն սուլթանը դողացրէր: Ժողովրդային այս ինքնաբախտ հետաքրքրութիւնը «արտակարգ շուրջ» թարգմանած էր դաշնակցական տեսաբան Պ. Վարանդեան, արեւուն վրայ բիծ տեսնելու չար մտածումով: Բայց Անդրանիկ երկու-երեք օր ետք իրեն վայել հիանալի եւ շուրջով ցոյց մը ըրաւ:

Իմացած էինք թէ դաշնակցութիւնը գանազան դժուարութիւններ յարուցած էր, իրեն ընկերացող կամաւորները ցրուելու աշխատանքէն մինչէ կանոնաւոր գործակարի մը վայել ինքնաշարժ մը չորաւարդուելու աստիճան: Բայց Անդրանիկ Կարին հասաւ, եւ իր տեսնէն եկան Սարգիս Արղամանեան եւ ութսուն ծիւղերներ: Ասոնք գիշեր մը հանգիստ ըրին, բայց յաջորդ առտու Անդրանիկ առաւ իր ծիւղերը ետեւը՝ ու փոթորիկի պէս շրջեցաւ Կարնոյ փողոցները: Ութսուն ծիւղեր ոչինչ են թուղթի վրայ. սակայն ութսուն ծիւղեր ամեն ինչ են, երբ մէկ մէկու ետեւէն փողոցներու մէջէն կը սուրան:

Չօր. Նազարբեկեան կազմ ու պատրաստ բանակ կ'ուզէր

